Արձանագրություն N 3
ՀՀ ՈԿ ԳՀԱՊՁԲ-22/2 ծածկագրով գնանշման հարցման
Գնահատող հանձնաժողովի նիստի

10 փետրվարի 2022թ
ժամը 14:30

ք. Երևան

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Հ. Մարգարյանը
անդամներ՝ Գ. Մխիթարյանը, Ե.Ասլանյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան

I. Հայտերի գնահատման արդյունքների մասին

(Հ. Մարգարյան)

1. Ընդունել ի գիտություն, որ «Բի Էֆ Բի» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում հանձնաժողովին է ներկայացրել հայտով ներկայացված փաստաթղթերի շտկված տարբերակները:

Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը տրամադրվել է հանձնաժողովի անդամներին:

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց մասնակցի կողմից ներկայացրած շտկված փաստաթղթերը և արձանագրեց, որ մասնակցի կողմից ներկայացված շտկված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

3. Հանձնաժողովը հաշվի առնելով, որ մասնակցի կողմից 1-ին, 4-րդ, 5-րդ, 6-րդ չափաբաժինների համար առաջարկված գները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, որոշեց.

ա/ կասեցնել նիստը ՀՀ ՈԿ ԳՀԱՊՁԲ-22/2 ծածկագրով գնանշման հարցման հրավերի 8.6 կետի համաձայն՝ 1-ին, 4-րդ, 5-րդ, 6-րդ չափաբաժինների համար առաջարկված գները այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները գերազանցելու հանգամանքով պայմանավորված:

բ/ ընտրված և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակցին որոշելու համար ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակցին ծանուցել գների նվազեցման շուրջ բանակցություններ վարելու համար:

գ/ գների նվազեցման շուրջ բանակցություններ վարելու և ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների ամփոփելու նպատակով գնահատող հանձնաժողովի նիստ հրավիրել 2022թ. փետրվարի 15-ին ժամը 14.30-ին ք. Երևան, Ծովակալ Իսակովի 29, «գնումների խումբ» աշխատասենյակ հասցեով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի

նախագահ _____ Հ.Մարգարյան

անդամներ՝ _____ Գ. Մխիթարյան

_____ Ե. Ասլանյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան